

ԿԱՏԱՐՅԱԼ ԹՎԵՐ-4

Ձեր խնդիրն է տրված n և m բնական թվերի համար արտածել $[n, m]$ միջակայքի բոլոր կատարյալ թվերը (**Բնական թիվը կոչվում է կատարյալ, եթե այն հավասար է իր բոլոր բաժանարարների գումարին բացի իրենից**):

Մուտքային տվյալներ.

Մուտքի միակ տողում տրված են n և m բնական թվերը, որոնք չեն գերազանցում 10^9 -ը:

Ելքային տվյալներ.

Ելքի տարբեր տողերում արտածել $[n, m]$ միջակայքի բոլոր կատարյալ թվերը աճման կարգով: Եթե այդ միջակայքում կատարյալ թվեր գոյություն չունեն արտածել-Absent:

Օրինակներ.

N	stdin	stdout
1	6 496	6 28 496
2	1 5	Absent